ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/5090-2020
«14 09» 2020թ.

«ԹԵՔՆՈԼՈՋԻ ԸՆԴ ՍԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Վ. ՇԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Շաքարյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 06-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-11» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցին և N 2 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված Աշխատանքները պետք է կատարվեին 3 փուլով՝ 1-ին փուլ՝ մինչև 30.03.2020թ., 2-րդ փուլ՝ մինչև 29.05.2020թ., և 3-րդ փուլ՝ մինչև 31.08.2020թ.:

Համաձայն սույն պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 06-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-11» գնման պայմանագրի 2.1.5 կետը, 2020 թվականի սեպտեմբերի 14-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900011027837» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 85,360,000 (ութսունհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարը, իսկ տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 426,800 (չորս հարյուր քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում ենք, որ հնարավոր տույժերի, տուգանքների և պատճառված վնասների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

9/14/2020

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Signed by: MELKUMYAN NAREK 3114850200

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Կատ. Գնումների բաժին
Հեռ 010 59 00 47

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am